ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն դասվար

Թեմա Գրաճանաչության մեթոդիկա

Կատարող Մելիքսեթյան Լիլիթ Գագիկի
Ազգանուն, անուն, հայրանուն

Ղեկավար Մ.Գ.Դ. Ջուլիետա Գյուլամիրյան
Ազգանուն, անուն, գիտական աստիճան, կոչում

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3
ԳԼՈՒԽ 1. ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՆ ..3
2.1 Գրության ուսուցման փուլերը 10
2.2 Հնչյունի և տառի ուսուցում.....10
2.3 Կարդալու ուսուցում 11
2.4 Գրելու ուսուցում 12
3.1 Գրելու ուսուցման առանձնահատկություններն առաջին դասարանում 13
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 15
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գրաճանաչությունը մանկապարտեզի ավագ խմբի երեխաների զարգացման կարևորագույն պայմաններից մեկն է: Այն կենտրոնացված, համակարգված գործընթաց է, որը պատրաստում է նրան գրելուն և կարդալ սովորելուն: Այս փուլում սխալ մոտեցումները կարող են հանգեցնել լրացուցիչ խդիրների: Այսպիսով այդ խնդիրներից խուսափելու համար անհրաժեշտ է ոչ միայն գրագետ կազմակերպել երեխայի գրաճանաչության գործընթացը, այլ նաև կիրառել նորագույն մանկավարժական տեխնոլոգիաներ, մեթոդներ, հնարներ, խաղեր, որոնք կօգնեն այդ գործընթացը դարձնել երեխայի համար մատչելի և հետաքրքիր:

Գրաճանաչության մեթոդները բաժանվում են 4 հիմնական խմբի՝ տառային, հնչյունային, վանկային և բառային: Հայկական դպրոցներում գրաճանաչության ամենահին մեթոդը հնչյունայինն է, որի հիմնադիրն ու առաջին գործադրողը եղել է Մ. Մաշտոցը:

Միջին դարերում Հռոմից և Հունաստանից Հայաստան է թափանցել տառանունների մեթոդը: 19-րդ դարի դարի 30-40-ական թվականներին, շնորհիվ Խ Աբովյանի ջանքերի, հնչյունային մեթոդը նորից մուտք է գործել: Իսկ արդեն 1970թ. նոր այբբենարանի հրապարակմամբ գործածության մեջ է դրվել վերլուծական-համադրման հնչյութավանկային մեթոդը: Դրա հիմքում դրվում է երեխայի հնչյութային լսողության զարգացումը, խոսքի հնչյութային կառուցվածքի ըմբռնումը, հնչույթների տարբերակման ու իմաստազատիչ նշանակության գիտակցումը, վանկի մեխանիզմների յուրացումը (աստվածները՝ Հայկական սովետական հանրագի-տարանից):

ԳԼՈՒԽ 1. ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Գրաճանաչության մեթոդը կարդալ և գրել սովորեցնելու միջոց է, որի հիմքում դրված է լեզվի հնչույթների ու տառերի փոխհարաբերությունը և ուսուցվող լեզվական

միավորը: Հնարավորություն է տալիս բանավոր խոսքը ճշտությամբ գրանցել տվյալ լեզվի հնչույթները մարմնավորող գրաֆիկական սիմվոլների կամ այբուբենի միջոցով, այսինքն՝ գրել սովորեցնել և այդ պայմանական նշանները վերստին իրենց համապատասխան հնչույթներին վերածելու միջոցով վերականգնել բանավոր խոսքը: Գրաճանաչության մեթոդները բաժանվում են չորս խմբի՝ տառային, հնչյունային, վանկային և բառային, որոնցից յուրաքանչյուրը կարող է լինել վերլուծական, համադրական և վերլուծական-համադրական: Հայ դպրոցում գրաճանաչության ամենահին մեթոդը հնչյունայինն էր, որը կոչվել է նաև պատմական: Հիմնադիրն ու առաջին գործադրողը եղել է Մեսրոպ Մաշտոցը: Միջին դարերում Հռոմից ու Հունաստանից Հայաստան է թափանցել տառանունների մեթոդը, որը երկար ժամանակ տիրապետող է եղել: 19-րդ դարի 30-40-ական թվականներին, շնորհիվ Խաչատուր Աբովյանի ջանքերի, հնչյունային մեթոդը նորից մուտք է գործել հայ դպրոցները, որի հետագա մշակմանն ու կատարելագործմանը մեծապես նպաստել են ականավոր մանկավարժներ Ս. Մանդինյանը, Ն. Տեր-Ղևոնդյանը, Ղազարոս Աղայանը և Թ. Խզմալյանը: 1870-1880-ական թվականներից մինչն 20-րդ դարի 30-ական թվականները հայ դպրոցում գործածության մեջ են եղել օրինակելի կամ նորմալ բառերի, ինչպես նաև կարդալու հիմքում ձայնավոր տառը դնելու և նրա շուրջ բաղաձայնները խմբավորելու մեթոդները: Վերլուծական-համադրական հնչյունային մեթոդի տարբերակներից է նաև մաքուր-բնական հնչյունների մեթոդը: Խորհրդային դպրոցի առաջին շրջանում լայն տարածում է գտել ամբողջական բառապատկերների մեթոդը, որը հիմնականում նախատեսվել էր անգլերենի ուսուցման համար: Հայ դպրոցում մեծ տարածում չգտնելով՝ տեղը զիջել է վերլուծական-համադրական հնչյունային մեթոդին, որը հարյուր տարուց ավելի, ընդմիջումներով, գործադրվում է: 1970 թվականին նոր այբբենարանի հրապարակմամբ գործածության մեջ է դրվել վերլուծական-համադրական հնչույթավանկային մեթոդը, որի հիմքում դրվում է երեխաների հնչույթային լսողության զարգացումը, խոսքի հնչույթային կառուցվածքի ըմբռնումը, հնչույթների տարբերակման ու իմաստազատիչ նշանակության գիտակցումը, վանկի մեխանիզմի յուրացումը:

Գրուսուցումը հայերենի՝ որպես օտար լեզվի ուսուցման դասընթացի նախնական (մուտքի) փուլն է: Հայերեն տառերը (հնչյունները) ճանաչելը, դրանց արտասանական

տեխնիկային տիրապետելը, գրելու և կարդալու հմտություններ մշակելը, ինչպես նաև սրան զուգընթաց կապակցված բանավոր խոսք կազմելու նվազագույն միավորներին ծանոթացնելը այս փուլի հիմնական նպատակներն են: Ծրագրով առանձնացված ժամաքանակը՝ 30 լսարանային ժամ (5 դաս), բավարար է վերը նշվածն իրացնելու համար: Գրուսուցման գործընթացը սկսելիս ներկայացվում է ժամանա- կակից հայոց լեզվի այբուբենը՝ տպագիր և ձեռագիր տարբերակնե- րով: Տպագիր տառի կողքին գրվում է ձեռագիրը, որից հետո՝ տառադարձության նշանը և հնչումը միջնորդ լեզուների (անգլերեն, պարսկերեն, ռուսերեն) համապատասխան հնչյուններով կամ հնչյունանշաններով: Այնուհետև դաս առ դաս ուսուցանվում է հայոց այբուբենը՝ հնչյունը, հետո՝ տառը:

Եթե երեխաները մեծանում են այնպիսի միջավայրում, որտեղ կարդում ու գրում են, ապա նրանք այդ մասին բավական բան են սովորում իրենց առաջին ուսուցչին հանդիպելուց տարիներ առաջ: Նրանք սովորում են սեփական նախաձեռնությամբ և ուժերով, ցուցաբերում են լեզվի մեջ խորամուխ լինելու զարմանալի ունակություն, բացահայտում են իրենց համար լեզվական կառուցվածքների իմաստը, սովորում են այն հմտորեն կիրառել՝ աստիճանաբար բարձրացնելով իրենց հմտության մակարդակը:

Անշուշտ, գրաճանաչության ձևավորման հարցում երեխաները կախված են մեծահասակներից, որոնք էլ շրջապատում են նրանց գրքերով, կարդում են նրանց համար, հնարավորություններ են ստեղծում, որ երեխաները կարդան ու գրեն իրենց սեփական մեթոդներով: Այս հնարավորությունները թաքնված առավելություն են նման երեխաների համար և թույլ են տալիս նրանց միանգամից ըմբռնումով ու ոգևորությամբ թևակոխել ընթերցանության ուսուցման փուլը: Սակայն եթե որոշ երեխաներ տանը գրաճանաչության վաղ փորձառության հազարավոր ժամեր են ստանում, մյուսները զուրկ են դրանից: Ուստի մանկապարտեզների դաստիարակներն ու տարրական դասարանների ուսուցիչները մեծ աշխատանք պետք է տանեն՝ նախապատրաստելու համար երեխաներին գրելու ու կարդալու լավ մեկնարկին: Այս ամբողջ գործընթացը մենք անվանում են ձևավորվող (կամ նախնական) գրաճանաչություն: Այն ներառում է այն ամենը, ինչ գրաճանաչության մեջ երեխաները բացահայտում են իրենց համար և ինչ մեծահասակները սովորեցնում են նրանց:

Ձևավորվող (նախնական) գրաճանաչությունը.

- երեխայի փորձառության մեջ մի փուլ է, որն սկսվում է այն ժամանակ, երբ երեխան առաջին անգամ տեսնում է գիրքը և զարմանում, թե մարդիկ ինչպես են օգտվում դրանից, և ավարտվում է այն ժամանակ, երբ երեխան կարողանում է ինքնուրույն կարդալ բառերը,
- վաղ ֆորմալ և ոչ ֆորմալ ուսուցում է, որ երեխան ստանում է մանկապարտեզում հոգատար դաստիարակներից, որոնք անում են ամեն ինչ, որ բոլոր երեխաները հասկանան, թե ինչ է կարդալն ու գրելը և ինչին են դրանք ծառայում, որպեսզի կարողանան առավելագույն օգուտ քաղել ընթերցանության ուսուցման փուլից: Քանի որ տպագիր խոսքը ներկայացնում է այն լեզուն, որով խոսում են, երեխաները պետք է հասկանան տպագիր խոսքի լեզուն և գիտակցաբար ըմբռնեն ինչպես իրենց խոսակցական լեզուն, այնպես էլ այդ լեզուն ներկայացնող տպագիր խոսքի առանձնահատկությունները:

Գրաճանաչության ուսուցման նախապատրաստական շրջանի հիմնական նպատակը երեխաներին միասնական դասարանական կոլեկտիվի մեջ կազմակերպելը և կարդալ ու գրել սովորելու աշխատանքի համար նրանց տեսականորեն ու գործնականորեն, հոգեբանորեն ու ֆիզիկապես նախապատրաստելն է: Այս շրջանի տևողությունը միշտ տատանվել է: Մինչև վերջերս՝ հնչյունային մեթոդի գործադրման ժամանակ, այն տևում էր 2-3 շաբաթ, հնչյութավանկային մեթոդի գործադրումով այդ ժամանակը կրճատվեց, հասցվեց 1.5-2 շաբաթի, հնչյութաբառային մեթոդի գործադրման արդյունքում այն տևում է 3-4 շաբաթ և այլն:

Տևողության այս տարբեր ժամկետների առկայությունը պայմանավորված է քաղաքային և գյուղական, մանկապարտեզից ու ընտանիքից եկած, դպրոցի համար պատրաստված լինելու աստիճանի, ինչպես նաև բարբառային միջավայրի և երեխայի տարիքային տարբերություններով:

Նախապատրաստական շրջանը ոչ միայն կարևոր, այլ անհրաժեշտ է բոլոր դպրոցների համար: Այդ նախապատրաստվածությունը պետք է կատարվի ժամանակակից մանկավարժական գիտությունների պահանջներին համապատասխան, որոշակի ծրագրով ու մեթոդներով, որպեսզի անհրաժեշտ արդյունք տա:

Նպաստի երեխայի մտավոր զարգացմանը, գրաճանաչության ուսուցման համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը:

Այս շրջանի համար բնորոշ են հետևյալ հիմնական խնդիրները՝ աշակերտների ծանոթացումը դպրոցական կարգուկանոնին, երեխաների խոսքի զարգացումը, տեսողության, լսողության, ուշադրության մշակումը: Գրելու համար ձեռքի նախապատրաստումը կարդալու սկզբնական կարողության ձևավորման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը, աշխարհաճանաչողական տարրական տեղեկությունների հաղորդումը, աշակերտների ուսումնասիրումը, դասարանական միասնական կոլեկտիվի ստեղծումը և այլն:

Այս աշխատանքներից ամեն մեկը յուրովի վերցրած տարբեր տիպի պարապմունքների մի ամբողջ համակարգ է կազմում, սակայն առանձին ու անկախ հանդես չի գալիս, հնարավոր չէ ասել, թե երբ է ավարտվում մեկը և երբ է սկսվում մյուսը, որովհետև դրանք խորապես միմիանց մեջ ներթափանցված, փոխադարձորեն միմիանց լրացնող ու ամբողջացնող աշխատանքներ են: Առաջին դասարանցիների համար դպրոցը նոր աշխարհ է՝ նոր հետաքրքրություններով, հոգսերով ու տպավորություններով, ուրախություններով ու դառնություններով լի: Հենց առաջին օրից սկսած ուսուցիչը պետք է իր աշխատանքն այնպես կազմակերպի, որ երեխայի համար այդ ամենի մեջ հաճելին ավելի շատ լինի, ոգևորությունն ավելի մեծ բաժին ունենա, քան հուսախաբությունը: Սակայն սա չի նշանակում, որ դասերը պետք է վերածվեն ժամանցի: Երեխան պետք է զգա աշխատանքի պատասխանատվությունը և դժվարությունը, միևնույն ժամանակ նա պետք է զգա, որ այդ աշխատանքը իր ուժերին ու կարողություններին հասանելի է, որ ուսուցիչը դժվարին պահերին իր կողքին է:

Ծանոթացումը դպրոցական կարգուկանոնին անհրաժեշտ պայման է բոլորովին նոր ու անծանոթ միջավայրում երեխաների արդյունավետ աշխատանքի համար: Դրա համար ուսուցիչը պետք է առաջնորդվի հետևյալ քայլաշարով.

ա) Աշակերտների ճիշտ տեղաբաշխումն՝ ըստ նրանց առողջական տվյալների, հասակի:

բ) Աշակերտների փոխադարձ ծանոթացմանը, որը կնպաստի դասարանական համերաշխ կոլեկտիվի ստեղծմանը:

գ) Դպրոցական կարգուկանոնի բացատրումը, որպեսզի երեխաների մեջ այս կամ այն վարվեցողության կանոնը դառնա կարողություն:

դ) Ճիշտ նստել սովորեցնելը, որը ոչ միայն առողջապահական կանոնների պահպանման, այլև երեխաների ֆիզիկական նորմալ զարգացման և դասերին ակտիվ կերպով մասնակցելու հիմնական նախապայմաններից են:

Աշակերտներին գրաճանաչության ուսուցմանը նախապատրաստելու գործընթացում կարևոր է խոսքի զարգացումը: Գրելու նախապատրաստման գործընթացում կարևոր է ձեռքի դաստակի ու մատների մանր մկանային համակարգերի զարգացումը, նուրբ ու չափավորված շարժումների ու դրանց համակցման կարողության մշակումը:

Մատների վարժությունները ոչ միայն կոնկրետ մատները մարզելու, գրելուն նախապատրաստելու, արյան շրջանառությունը լավացնելու համար է, այլ նաև լավագույն միջոցը ուշադրության, հիշողության, մտածողության, երևակայության, շարժողական և տեսողական կոորդինացիայի հավասարակշռության կարգավորման ու զարգացման համար: Իսկ այդ գործընթացը դրական է ազդում երեխայի ինտելեկտի վրա:

Ստորև ներկայացնենք վարժությունների մի քանի օրինակ, որոնցից մեծ մասը մեր գրուսուցման ժամանակ դադարներին անպայման կիրառում ենք:

- Նախ շփենք ձեռքերը: Դա պարզ վարժանք է:
- Ծափահարելու պես վարժություն կատարել, բայց ավելի հստակ, մատներն ու ափերը ձիգ պահած հպել իրար (ճկույթը ճկույթին, բութը բթին և այլն.):
- Շփել բութ մատները, նախ մի ձեռքը, հետո մյուսը:
- Մի ձեռքի ճկույթն ու մատնեմատը բացել (կոկորդիլոս) մյուսները փակել, մյուսի ցուցամատն ու միջամատը բացել (ատրճանակ) մյուսները փակել: Մի քանի անգամ կրկնել:
- «Բարի այծ-չար այծ» վարժությունը. երկու ձեռքերի ցուցամատն ու միջնամատը բացած պահում ենք, մնացածը ծալում «Բարի այծիկ» և բոլոր մատները փակում ենք ցուցամատն ու ճկույթն ենք բացում «չար այծիկ»:
- Ձեռքի ափերը դեմ դիմաց պահել, աջ բռունցք անել, հետո փոխել ձախ բռունցք անել, աջը բացել: Մի քանի անգամ կրկնել:

- Ձեռքերը բացել ափերը դեմ դիմաց պահած. «Բարև բութիկ» վարժության ժամանակ նախ ցուցամատով ենք բարևում բութին, հետո միջնամատով, մատնեմատով ու ճկույթով: Որից հետո հետ ենք գալիս նույն կերպով:

ԳԼՈՒԽ 2. ԳՐԱՎՈՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

2.1 Գրության ուսուցման փուլերը

Գրաճանաչության ուսուցման աշխատանքներում ինչպես իր տևողությամբ ու բարդությամբ, այնպես էլ կարևորությամբ ամենահիմնական տեղը գրավում է բուն գրուսուցման կամ այբբենական շրջանը: Այն բաժանվում է երեք փուլի.

Առաջին փուլում ուսուցանվում են գրության ու արտասանության տեսակներից ամենահեշտ ու ամենագործածական հնչոուններն ու դրանց տառերը (ա, ի, ու, տ, կ, ս, ր, ն, մ, շ, լ, պ): Այս փուլում երեխաներն էլ ավելի են վարժվում բառերի վանկային ու հնչյունային վերլուծություններ ու համադրություններ կատարելու մեջ: Սովորում են բառերը կարդալ՝ հիմքում ունենալով վանկերով կամ բառերով կարդալու սկզբունքը: Առաջին փուլում կարողանում են երկու-երեք նախադասությունից կազմված պարզ բնագրեր ընթերցել, գրել անցած տառերով պարունակող բառեր ու բառակապակցություններ:

Երկրորդ փուլում անցնում են համեմատաբար ավելի դժվար արտասանություն ու գրություն ունեցող ու ավելի քիչ գործածական հնչյուններն ու տառերը (ը, է (ե), օ (ո), վ, յ, հ, զ, ռ, ղ, ժ, խ, բ, գ): Այս փուլում տրվում է տպագիր նյութը ձեռագիր վեաձելու բավականին բարդ առաջադրանքներ, որոնք երեխաները կարողանում են հաղթահարել:

Երրորդ փուլում անցնում ենք արտասանության և գրության տեսակներից բավականին բարդ և խոսքի մեջ համեմատաբար քիչ գործածական հնչյուններն ու տառերը (ե, ո, և, թ, չ, ծ, ց, փ, ջ, ք, ճ, ֆ, ձ): Այս փուլի ամենամեծ դժվարությունն, անշուշտ, երկհնչյուն և եռահնչյուն (ե, ո, և) տառերի ի հայտ գալն է, որը միանգամայն նորություն է երեխայի համար:

2.2 Հնչյունի և տառի ուսուցում

Հնչյունի և տառի լրիվ յուրացման համար կարևոր նշանակություն ունի դրանց հաճախակի կրկնությունը հետագա նյութերում, որպեսզի արդեն ուսուցված հնչյունի ու նրա տառերի յուրացումը կայունանա, ամուր զուգորդումներ ստեղծվեն, որպեսզի դրանց նոր կապակցությունների մեջ մտնեն ուսուցվող և արդեն ուսուցված հնչյունների ու դրանց տառերի հետ:

Ցանկացած նոր ուսուցանվող հնչյունը սովորելիս այն բառի մեջ պետք է արտասանել հատուկ շեշտադրությամբ, որպեսզի երեխան նկատի այդ հնչյունի տարբեր դիրքերը տարբեր բառերում: Բազմաթիվ խաղ-վարժություններով լսելի ու ճանաչելի դարձնել հնչյունը:

Օրինակ, բաժանել նկարներ (արդեն ծանոթ) ու բարձրաձայն կատարել հնչյունային, վանկային վերլուծություն, որոշել նոր սովորած հնչյունի տեղը, որից հետո մատիտով լրացնել համապատասխան վանդակը:

Օրինակ «գԳ» հնչյուն-տառերի ուսուցման ընթացքում տարվեն խմբային աշխատանքներ

I խմբին՝ գ-ն բառասկզբում նկարներ բաժանել (գիրք, գնդակ, գորտ.)

II խմբին՝ գ պարունակող նկար բառեր (արագիլ, կարագ.)

III խմբին՝ խառը (գայլ, գազար, օրագիր.)

Հրահանգել. կատարել հնչյունային վերլուծություն ու գտնել մեր սովորած հնչյունի տեղը, դնել կետիկ, որից հետո դադար տալ, սովորել տառի գրությունը և գրել նշված կետի վանդակում սովորած տառը: Սա հետաքրքիր, աշխուժացնող խաղ վարժանք է, որը կամրապնդի յուրաքանչյուր նոր սովորած հնչյունի և տառի իմացությունը:

2.3 Կարդալու ուսուցում

Տառն ազդում է տեսողության, իսկ հնչյունը լսողության վրա, այդ երկու գրգռիչներն ուղեղի կեղևի տեսողական և լսողական, իսկ արտասանելու ժամանակ նաև

շարժողական կենտրոններում առաջացնում են համապատասխան գրգռիչներ: Ուղեղի կեղևի մի քանի կետերի միաժամանակյա գրգռման ազդեցության տակ ուղեղի այդ կենտրոնների միջև որոշակի կապ է ստեղծվում, որի հետևանքով տառի ընկալումը կարող է կարդացողի մոտ առաջացնել համապատասխան հնչյունային պատկերացում և, ընդհակառակը, որևէ հնչյունի արտասանումն ու լսողական ընկալումը կարող է առաջացնել համապատասխան տառի պատկերացում:

2.4 Գրելու ուսուցում

Գրելը, որպես մտավոր գործողություն, շատ ավելի բարդ աշխատանք է, քան կարդալը: Գրելու համար անհրաժեշտ են հետևյալ մասնակի գործողությունները՝ կամքի մղումը, գրելիքի նյութական բովանդակության մտապահումը, գրելուն զուգահեռ ընթացող լուռ ընթերցումը կամ գիտելիքի ձայնային վերհիշումը, հնչյուններին համապատասխանող տառերի ձևերի պատկերացումը, ինչպես նաև այս բոլոր բաղադրիչների աստիճանական միավորումը և ավտոմատացումը: Որպեսզի աշակերտը կարողանա ճիշտ գրել, նախ պետք է պարզի բառի հնչյունային կազմը, նոր միայն գրի, հակառակ դեպքում կձախողվի:

Տառի գրության ուսուցման ժամանակ ևս հնչյունային վերլուծություն պետք է անել՝ այս անգամ անջատված հնչյունի դիմաց դնելով նրա ձեռագիր տառը:

Ուսուցիչը գրատախտակի վրա գրում և միաժամանակ բացատրում է, թե տվյալ տառը ինչ հիմնական մասնիկներից է կազմված, նկարագրում է, թե ինչ հաջորդականությամբ պետք է համադրել այդ մասնկիները, որպեսզի տառը ստացվի, նշում է, թե այդ մասնիկը կամ տառն ամբողջությամբ մինչ այդ անցած տառերից որի՞ն է նման և ինչո՞վ:

Նոր տառի գրությունը երեխաներին նախապատրաստելիս՝ ուսուցիչը մատի շարժումով գրում է և գրել է տալիս օդում, սեղանի վրա, ընկերոջ մեջքին, որպեսզի տառապատկերի պարզ ընկալում լինի: Դրանից հետո կարելի է անցնել տառի

գրությանը: Առաջադրված բառը պետք է գրել 2-3 դադարներով, որպեսզի երեխաները չհոգնեն, տառապատկերներն էլ չաղավաղեն:

Թույլ աշակերտների համար շատ օգտակար է կետային հենակներով գրելու մեթոդը:

Գրաճանաչության շրջանում տառերը սովորելուն զուգընթաց երեխաները գաղափար են կազմում նաև մի շարք հնչյունների տառային արտասանությունների օրինաչափությունների՝ այսինքն ուղղագրական կանոնների մասին, որոնցից են (օ,է,ը) հնչյունների (ե,ո, և) տառերի ուղղագրությունը, գաղտնավանկի և տողադարձի օրենքները և այլն: Պետք է խուսափել ուղղագրական կանոններն անգիր անելուց, ավելի մեծ տեղ պետք է տալ գրավոր վարժություններին՝ գործնական ձևով սովորեցնել ուղղագրական օրինաչափութունները:

Օրինակ: Կարելի է յուրաքանչյուր տառի (գ-ք) (դ-թ) (ջ-չ) (ձ-ց) (ե, ո, և) կանոններին պատկանող ու սովորած բառերի համար պատրաստել պաստառ ու տրված բառերը երկար ժամանակ թողնել երեխաների աչքի առաջ:

Այս շրջանում երեխաները տարբերում են վերջակետը, ստորակետը, գիծը, ստորակետ-գիծը, միջակետը, կախման կետը, բազմակետը, չակերտները հարցական ու բացականչական նշանները, շեշտը և բութը:

«Այբբենարանում» տրված նկարների, առանձին բառերի, բառակապակցություն-ների, նախադասությունների կապակցված նյութերի, դրանց շուրջ անցկացվող զրույցների, բացատրությունների, էքսկուրսիաների, առարկայական դասերի, բնության դիտումների, ուսուցման տեխնիկական մջոցների, զննական նյութերի և այլ միջոցներով երեխաներին տարրական տեղեկություններ ենք տալիս շրջապատի աշխարհի, մարդկանց աշխատանքի, և այլ հարցերի վերաբերյալ: Դասագրքում կան նաև բոլորովին նոր, առօրյա կյանքից երեխաներին անծանոթ նյութեր:

ԳԼՈՒԽ 3. ԳՐԵԼՈՒ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

3.1 Գրելու ուսուցման առանձնահատկություններն առաջին դասարանում

Տարրական դասարաններում երեխայի առջև դժվարին խնդիրներից է գրավոր խոսքի յուրացումը: Գրավոր խոսքի հմտությունները սկսում են կազմավորվել գրաճանաչության շրջանում և հետագա ուսումնառության ամբողջ ընթացքում շարունակվում են հղկվել ու կատարելագործվել:

Այդ աշխատանքը պետք է տարվի ծնողների հետ համատեղ աշխատանքով: Դպրոցում կատարված աշխատանքը պետք է հետևողականորեն շարունակվի տանը, որպեսզի արդյունքը ակնհայտ դառնա:

Մենք բոլորս շատ լավ գիտակցում ենք, թե ինչպիսի բարդ փուլ է սկսվում երեխայի մոտ գրաճանաչության շրջանում գրուսուցում կազմակերպելու համար: Այդ աշխատատար գործընթացը երեխաներից պահանջում է մտավոր, ֆիզիկական ունակություններ, հատուկ ճիգերի գործադրում, գրելու տեխնիկական հմտություններ ու հուզական կայունություն:

Ուսուցման գործընթացը առավել դժվարին և առանձնահատուկ աշխատանք է պահանջում 6 տարեկանով համալրված դասարանում: Այդ դժվարությունների նվազեցմանը մեծապես կօգնի ուսուցման առանձնահատկությունների իմացությունը:

- գրելու ընթացքում ուշադրության կենտրոնացում,
- ընթացքում կատարել վերջույթները հանգստացնող ու վարժեցնող աշխատանքներ,
- աշխատանքի կատարման ճշտության ինքնաստուգում ու գնահատում: Կարելի է ուղղել սխալը հետևյալ արտահայտությամբ: Օրինակ, «Արմե՛ն ջան, նայի՛ր, այստեղ կարծես սխալվել ես, մի քիչ թեքություն պաշտպանիր ու էլեմենտները հավասար գրիր»: Աշակերտը կոգևորվի, կփորձի ուսուցչի կամ ծնողի դիտողություններից հետո ճիշտ ու գեղեցիկ գրել: Դպրոցում անպայման հաշվի ենք առնում երեխայի անհատական առանձնահատկությունները ու չենք պարտադրում ավելին: Մի խոսքով, այնպես պետք է կազմակերպել այդ գործընթացը, որ դպրոցի տարբեր պատրաստվածություն ունեցող երեխաները սիրով մասնակցեն այդ աշխատանքին:
- Կարևոր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ արագ գրելու կարողությունը խիստ անհատական է, և չի կարելի այն պատրաստել բոլորին: Եվ ի վերջո, պետք է հաշվի առնել երեխայի վարքի, շարժուձևի, որոշակի առանձնահատկություններ:

Օրինակ, դանդաղաշարժ երեխան երբեք էլ չի ձգտի արագ գրել, և ոչ մի դիտողություն նրա վրա չի ազդում: Շատ կարևոր է հաշվի առնել այն, որ քանի դեռ երեխան չի գիտակցում «ինչպես գրել», այսինքն չի հասկանում գործողությունների հաջորդականությունը, մեխանիկական վարժություններով «վարժեցնել» երեխային ոչ միայն անիմաստ է, այլ նաև վտանգավոր: Յուրաքանչյուր տառի գրության ժամանակ երեխան պետք է գիտակցի, թե որտեղից սկսի, ուր տանի և որտեղ ավարտի այն: Այդ ամենը շտկելուց հետո միայն կարելի է խոսել արագ գրելու կարողության յուրացման մասին: Երբեք չշտապեցնեք երեխային՝ ասելով «Արա՛գ, շտապի՛ր, շատ դանդաղ ես գրում»: Այդ հրահանգը երեխային կտանի հակառակ ճանապարհով: Ավելի լավ է դիմանալ ու առաջնորդվել «Լավ է քիչ, բայց ճիշտ ու գեղեցիկ» սկզբունքով:

- Մյուս առանձնահատկությունն այն է, որ գրաճանաչության շրջանում, հետևողական պետք է աշխատել հնչյունային լսողության և ընկալման հմտության կատարելագործման ուղղությամբ, քանի որ հնչյունային վերլուծություն կատարելու կարողության բարձր մակարդակը գրավոր խոսքի յուրացման հիմքն է: Ուստի երեխան պետք է կարողանա լսել հնչող բառը, որից հետո բառի իմաստային կողմից տեղափոխվել դեպի հնչյունային վերլուծություն:
- Որպեսզի գրավոր աշխատանքը արդյունավետ լինի, պետք է աշխատանքին տրամադրել ոչ ավել, քան 8 րոպե:
- Գրելուց հետո թույլ տալ, որ երեխան գնահատի ինքն իրեն: Երբ երեխան զգում է, որ իր մոտ ինչ-որ բան այնպես չէ, սկսում է ձևավորվել ցածր ինքնագնահատական: Ուստի, չպետք է նվաստացնել երեխային, այլ հակառակը՝ ոգևորել նրան:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սկսենք նրանից, որ տառուսուցման արդյունավետ աշխատանքին նախորդում են էլեմենտներով, գծիկներով, խոշոր ու մանր պատկերներով աշխատելը: Այս փուլը ավելի հեշտ են հաղթահարում 6 տարեկանը լրացած երեխաները: Աշխատանքն ավելի արդյունավետ է լինում, երբ երեխան, վազելով գրատախտակի մոտ, իր առաջին

հաջողված կամ ձախողված փորձն է անում: Ուսուցիչը ուղղելով մեկի սխալը՝ ևս մեկ անգամ տեսնել ու լսել է տալիս ամբողջ դասարանին տառի ճիշտ գրությունը: Որից հետո աշակերտը ավելի վստահ ու համարձակ սկսում է գրել մաքրագրության մեջ: Ես սևագրությունն արգելում եմ օգտագործել նոր տառի ուսուցման, գրության ժամանակ:

Կարելի է ասել, որ երեխային պետք է տանը միշտ մատիտով ու գրիչով աշխատելու, նկարելու, խաղալու պայմաններ ստեղծել, որ դպրոցում այս փուլից անցումը հեշտ լինի:

Գրաճանաչության փուլում դասարանական աշխատանքի ամրապնդումը պետք է տանն արվի:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայ մանկավարժներ. Գիրք Բ, Երևան 1961թ

2. Տեր-Գրիգորյան Ա., «Գրավոր աշխատանքները տարրական դասարաններում», Երևան 1961թ

3. Տեր-Գրիգորյան Ա., Վարդանյան Ա., «Այբբենարան», Երևան 1970-1980թթ.